# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՄԱՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Լրամշակված)

Պատվիրատու՝ << **ԱՐՄԵՆԻԱՆ ՈԼՆԱՏ** >> **ՍՊԸ**
Գործադիր տնօրեն Ա. Ստեփանյան

Նախագծող՝ ՇԻՆ-Կոմֆորտ ՍՊԸ
Գործադիր տնօրեն Վ. Աղդալյան



Ընդհանուր տեղեկատվություն. .... 4
2. Հավելվածներ .... 4
3. Հապավումներ. .... 4
4. . ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ կազմման իրավական հիմքերը .... 5
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ.... 8
6. Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը .... 9
7.ՇՄԱԳ հաշվետվության մշակման հիմքերը .... 9
8. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ .... 10
8.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր .... 10
8.1.1. Առկա իրավիճակի նկարագրություն .... 10
8.2. Շրջակա միջավայրի բնութագրերը .... 14
8.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը. .... 14
8.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն .... 15
8.2.3. Կլիմա և օդային ավազան .... 16
8.2.4. Հողային ռեսուրսներ. .... 20
8. 2.5.Ջրային ռեսուրսներ .... 21
8.2.6. Կենսաբազմազանություն .... 21
8.2.7. Պատմության և մշակութային հուշարձաններ: .... 22
8.2.8. Բնության հուշարձաններ .... 23
8.2.9. Սոցիալ-տնտեսական .... 23
9. Նախատեսվող գործունեության տեխնիկական տեխնոլոգիական լուծումները .... 24
10. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր .... 30
11.Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը .... 31
11.1 Օդային ավազան. .... 32
11.2 Հողային ռեսուրսներ. .... 33
11.3 Ջրային ռեսուրսներ. .... 33
11.4 Աղմուկ և թրթռում .... 34
11.5 Թափոններ. .... 36
11.6 Արտակարգ իրավիճակներ. .... 38
11. 7 Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն. .... 40

**11.8 Պատմամշակութային և բնության հուշարձաններ. ............ 42**
**11.9 Սոցիալական. ............ 42**
**11.10 Լանդշաֆտ. ............ 43**
**11.11 Բարեկարգում և Կանաչապատում. ............ 43**
**12. Մոնիթորինգ ............ 44**
**13. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան ............ 45**
**14 Մշտադիտարկման միջոցառումներ՝ մոնիտորինգ............ 52**
**Գրականություն ............ 57**
**Հավելված 1, Սեփականության վկայական ............ 59**
**Հավելված 2 Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ ............ 61**
**Հավելված 3 Ավազանու որոշում............ 64**
**Հավելված 4 Ճարտարապետահատակագծային առաջադրանք............ 66**
**Հավելված 5 Շինաշխատանքների կազմակերպման ժամանակացույց և հատակագիծ ............ 70**
**Հավելված 6 Գլխավոր հատակագիծ............ 71**
**Հավելված 7 Գազի միացման տեխպայման ............ 72**
**Հավելված 8 Էլ. հոսանքի տեխպայման ............ 75**
**Հավելված 9 Ջրահեռացման և ջրի միացման տեխպայման............ 77**
**Հավելված 10, Կանաչապատման հատակագիծ............ 79**
**Հավելված 11 Հատված կադաստրային քարտեզից և կոորդինատներ ............ 80**
**Հավելված 12, Իրավիճակային քարտեզ............ 81**
**Հավելված 13, Հնագիտական եզրակացություն ............ 82**

**Ընդհանուր տեղեկատվություն.**

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | Լոռու մարզի Ալավերդի համայնքի Այգեհատ բնակավայրում գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման տնտեսության կառուցում |
| Պատվիրատու | Արմենիան Ոլնատ ՍՊԸ |
| Նախագծող | Շին-Կոմֆորտ ՍՊԸ |
| Նախագծողի իրավաբանական հասցեն | ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Ազատության 35/33 |
| Նախագծողի փաստացի գործունեության տարածք | ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքի Այգեհատ բնակավայր |
| Հեռախոս, էլեկտրոնային փոստ | (093) 81 03 51, info@shinkomfort.am |

## 2. Հավելվածներ

Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայական
Հավելված 2. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ
Հավելված 3. Ավազանու որոշման նախնական համաձայնությունը
Հավելված 4.Ճարտարապետահատակագծային առաջադրանք
Հավելված 5. Շինհրապարակի կազմակերպման ժամանակացույց
Հավելված 6. Գլխավոր հատակագիծ
Հավելված 7. Գազի միացման տեխպայման
Հավելված 8 Էլ.հոսանքի տեխպայման
Հավելված 9 Ջրահեռացման և ջրի միացման տեխպայման
Հավելված 10. Կանաչապատման սխեմա
Հավելված 11. Հատված կադաստրային քարտեզից և կոորդինատներ
Հավելված 12. Իրավիճակային քարտեզ
Հավելված 13, Հնագիտական եզրակացություն

3. Հապավումներ.

ՇՄԱԳ-Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՀՀՇՆ-Հայաստանի Հանրապետության Շինարարական Կլիմայաբանություն

ՇՄՆ-Շրջակա միջավայրի նախարարություն

4. . ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ կազման իրավական հիմքերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.- ի ՀՕ-110 ՀՀ Օրենքում՝ 2023թ. մայիսի 3-ի փոփոխություններ կատարելու մասին օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ սահմանված դրույթներին համապատասխան: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները: Բոլոր նախատեսվող գործունեությունները, որոնք կարող են ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք** («Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.)- կարգավորում է մթնլորոտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

**«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ. )** - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց զրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածությանաստիճանից:

**«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք** (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

**«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ. )** – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը,

բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

**«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)**–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

**«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.)** -Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպաիրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

**«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)** - Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)**-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

**ՀՀ-ում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121Ն որոշում** - սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում

վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորվում են դրա հետ կապված հարաբերությունները:

**«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002)** - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

**«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք** / Ընդունված է 2001 թվականի մարտի 7-ին/ Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, սույն օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և Հասարակական Նշանակության Շենքերի ու Շինությունների Սանիտարապաշտպանական Գոտիներ և Սանիտարական Դասակարգում» Հայաստանի Հանրապետության Շինարարական Նորմերը Հաստատելու և ՀՀ Քաղաքաշինության Կոմիտեի Նախագահի 2022 Թվականի Հունիսի 14-Ի N 11-Ն Հրամանում Փոփոխություն Կատարելու Մասին, «1» փետրվարի 2024 թ. Հ րաման, N 06-Ն:

## ՀՀ կառավարության որոշումներ

- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»
- ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108-Ն որոշում «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 30.10.2008 թ. N1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թ. «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 Թվականի Նոյեմբերի 19-Ի N 1325-Ն Որոշման Մեջ Փոփոխություն Կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:

- ՀՀ կառավարության 8 հոկտեմբերի 2009 թվականի «Կենտրոնացված կոյուղացանց չունեցող համայնքներում նոր կառուցվող օբյեկտների համար կոյուղաջրերի տեղային մաքրման կայանների պարտադիր տեղադրման նորմերը հաստատելու մասին» N 1142-Ն որոշում:

**«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)** կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13,14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 "Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ.

Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին" N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա, և Բ: Ըստ Օրենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ$^2$-ը:

Համաձայն Օրենքի լիազոր մարմինը՝ շրջակա միջավայրի նախարարությունը իրականացում է հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության փորձաքննություն, տրամադրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:

## 5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

### Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր

բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Ըստ "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" օրենքի փորձաքննության ենթակա են օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ, 6-9-րդ մասերով, ինչպես նաև օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված՝ նախատեսվող գործունեության տեսակների ՇՄԱԳ հաշվետվությունները և նախագծային փաստաթղթերը.

**6. Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը**

Ներկայացվող գործունեության պատվիրատու է հանդիսանում՝ «ԱՐՄԵՆԻԱՆ ՎՈԼՆԱՏ» ՍՊԸ-ն, որի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 54/1, բն. 79

Մասնավորապես ՇՄԱԳ շրջանակներում, պատվիրատու կազմակերպությունը պատասխանատու է լինելու ամբողջ նախագծի իրականացման մոնիթորինգի համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- Հետևել, որ բնապահպանական կառավարման պլանի բոլոր պահանջները՝ (ներառյալ բնական միջավայրի պահպանության պլանավորումը և մեղմացնողմիջոցառումները), կապված նախագծի իրականացման հետ, պատշաճորեն ներառվեն ծրագրի մրցութային փաստաթղթերի մեջ:
- Հետևել, որ բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և/կամ համաձայնությունները, որոնք պահանջվում են համապատասխան կառավարական մարմինների կողմից, կառուցողը ստանա նախքան նախագծի շրջանակներում որևէ շինարարական աշխատանքների մեկնարկը:
- Համոզվել, որ կառուցողները (կապալառուներ) լիարժեք կերպով պատկերացնում են իրենց պարտականությունները՝ շրջակա միջավայրի պահպանության խնդիրների մեղմացման հարցում՝ կապված ԲԿՊ իրականացման ընթացքում աշխատակազմի հավաքագրման և վերապատրաստման հետ:
- Կառուցողի կողմից ԲԿՊ իրականացման մոնիթորինգ, համաձայն մոնիթորինգի պլանի:

Նախատեսվող գործունեության համար առկա է Տեղական ինքնակառավարման մարմնի նախնական համաձայնությունը (հավելված 3):

**7.ՇՄԱԳ հաշվետվության մշակման հիմքերը**

Նախատեսվող արտադրության կառուցման հայտը մշակված է հիմք ընդունելով.

- արտադրամասի կառուցման նախագծային փաստաթղթերը,

-տեղամասի ինժեներաերկրաբանական հետազոտությունների հաշվետվությունը,

- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,

- սեփականության վկայականը՝ Հավելված 1

## 8. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

8.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր

8.1.1. Առկա իրավիճակի նկարագրություն

Տարածքն ապահովված է կադաստրային փաստաթղթերով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը բերված է հավելված 1-ում): Համաձայն սեփականության վկայականի տարածքը 0.79368 հա է, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտի:

Նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսական արադրանքի(ընկույզի) վերամշակման տնտեսության կառուցում: Գործունեության տարածքը գտնվում է կից H35 ճանապարհին, շենքը տեղադրվելու է ըստ նորմերի, առանցքից հաշված 50 մ-ից ավել հեռավորության վրա, հողամասին կից գտնվում են վարելահողեր, բնակելի տներ՝ ավելի քան 160մ հեռավորության վրա (տես իրավիճակային քարտեզ հավելված 12 և ստորև բերված նկարները): Կից գտնվող հողամասերից երկուսի սեփականատերը հայտնել է իր համաձայնությունը նշված գործունեության իրականացման համար, մնացածը գտնվում են ավելի քան 3մ հեռավորության վրա:




Տեսարան արևելքից, հեռվում երևում է Արդվի գյուղը


Տեսարան հյուսիսից, հեռվում երևում է Այգեհատ գյուղը

Նախագծով նախատեսվում է կառուցել ուղղանկյունաձև շենք, որն իր առաջին հարկում ներառում է ընդհանուր արտադրական տարածքներ և հանդերձարան իր սանհանգույցով, իսկ երկրորդ հարկն իր մեջ ներառում է արտադրամասի կազմակերպման և կառավարման սենքերը:

Նախագծով նախատեսվում է կառուցել հատակագծում ուղղանկյունաձև , 55300x72100 մմ զաբարիտային չափերով շենք, որն իր նկուղային հարկում -6.930 նիշում ներառում է ընդհանուր արտադրական տարածքներ: Իսկ առաջին հարկում՝ ±0.000նիշում, որը զբաղեցնում է 35900x54900մմ չափերով հատված, իր մեջ ներառում է արտադրամասի կազմակերպման, կառավարման և պահեստավորման սենքերը, ինչպես նաև հանդերձարան իր սանհանգույցով և ցնցուղարաններով: Նախատեսվող օժանդակ կառույցներն են՝ ենթակայան՝ 47մ2, կաթսայատուն՝ 83 մ2, ուղղանկյունաձև մաքրման կայան 20 մ2, սեպտիկ հոր՝ 25 մ2:

Արտադրամասի ներսում նախատեսվում է պահեստարաններ՝մոտ 800 մ2 ընդհանուր մակերեսով, որն իր մեջ կներառի հումքի, պատրաստի արտադրանքի և տարաների և փաթեթավորման նյութերի պահեստ:

Արտադրամասի ներսում իրականացվելու է ընկույզի տեսակավորման, ջարդման և փաթեթավորման աշխատանքներ: Արտադրողականության առավելագույնը կկազմի 6000կգ/ժամ: Առկա է լինելու սառնարանային տնտեսություն, որն աշխատելու է էկոլոգիապես անվտանգ, օզոնային շերտը չքայքայող սառնագենտով՝ մոտ 100մ² ընդհանուր մակերեսով (մոտ 80 տոննա միաժամանակյա պահպանման տարողությամբ)՝ հումքի և պատրաստի արտադրանքի օպտիմալ ջերմատեխնիկական պայմանների ապահովման համար: Սառնարանային խցերում ապահովվելու է +2°C-ից +8°C ջերմաստիճանային ռեժիմ: Ագրեգատների սնուցումը և կոնդենսատի հեռացումը ներառված են նախագծի համապատասխան՝ էլեկտրամատակարարման և ջրահեռացման բաժիններում:

Նախագիծն իրականացվելու է ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական պայմանների և պահանջների համապատասխան, հաշվի առնելով պատվիրատուի նախագծային առաջադրանքը:

Արտաքին ջրահեռացումը իրականացվելու է բիոլոգիական մաքրման կայան-սեպտիկ հոր տարբերակով: Ծածկն իրականացվելու է մետաղական ֆերմաներով, արտաքին պատերը՝ սենդվիչ պանելներով:

Նախագիծը մշակված է համաձայն ՀՀՇՆ 30-01-2014 Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն նորմերին համապատասխան՝ Շին-Կոմֆորտ ՍՊԸ-ի կողմից: Շինանյութերը մատակարարվելու են սերտիֆիկացված ընկերություններից՝ սանիտարական և էկոլոգիական նորմերին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Նախատեսվող գործունեության եռաչափ պատկերը ներկայացված է ստորև.



**կառուցման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.**

*Հողամասի մակերեսը - 7932,58 մ2*
*Հիմնական արտադրական շենք - 3989 մ2/*
*Կաթսայատուն - 83 մ2/*
*Ենթակայանի շենք - 47 մ2/*
*Մաքրման կայանի (Topas) շենք - 20 մ2/*
*Սեպտիկ հոր - 25 մ2/*
*Կառուցապատման ընդհանուր մակերեսը - 4164 մ2/*
*Մայթերի մակերեսը 516.5 մ2/*
*Ասֆալտապատ մակերևույթի մակերեսը 2442 մ2/*
*Կանաչապատ մակերևույթի մակերեսը 787.33 մ2*

**Գեոմորֆոլոգիական** տեսակետից տարածքը գտնվում է Լալվար լեռան ծայր հարավային լանջում և հարում է Լոռվա խորը կիրճին: Տեղանքը հարթ է, այն ընդհանուր թեքությամբ ընկնում է դեպի հարավ:
Տարածքի բացարձակ բարձրությունը գտնվում է 1200մ. – ի սահմաններում:
Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հրաբխային ապարները, որոնք հետազննվող տարածքում ներկայացված են սևա - գորշավուն, ծակոտկեն բազալտներով ու պորֆիրտային ապարներով: Դրանք ծածկված են էլյուվիալ ու դելյուվիալ գոյացումներով:

- Հիդրոերկրաբանական տեսակետից բացված խորությունների վրա գրունտային ջրեր չեն հանդիպել:

Գրունտների կարգը ըստ մշակման՝
**Շերտ-1** բուսական շերտ –սև գույնի, հումուսացված, շերտի հզորությունը մինչև 0,4մ տարածված է ամբողջ տեղամասում,
**Շերտ-2՝** ենթակավեր (суглинок) բաց շագանակագույն, կիսապինդ, ավազե ենթաշերտերի ու խճի պարունակությամբ, տարածված է ամբողջ տեղամասում:
**Շերտ-3՝** ենթակավեր (суглинок) բաց շագանակագույն, կիսապինդ, առանց բեկորների պարունակության:
Շերտի հզորությունը մինչև 8,7մ, տարածված է տեղամասի հարավային կողմում:
**Շերտ-4՝** Ժայռային ապարներ – բազալտներ մեծաբեկորների տեսքով, տարածված է ամբողջ տեղամասում, շերտի բացված հզորությունը մինչև 4,5մ:
Տեղամասը հետազոտված խորության վրա ներկայացված է չորս ինժեներա–երկրաբանական տարրերով, փոփոխական հզորությամբ և ըստ ռելիեֆի տարածումով:
Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 –ի հետազոտվող տարածքը գտնվում է առաջին սեյսմիկ գոտում, գրունտների հնարավոր մաքսիմալ AMAX = 0,3g արագացումով:
Հիդրոերկրաբանական տեսակետից բացված խորություններում գրունտային ջրեր չեն հանդիպել: Գրունտների սեզոնային սառեցման ամենամեծ խորությունը ընդունված է 75սմ: Տարածքը պիտանի է կապիտալ շինարարության համար առանց ինժեներական նախապատրաստման:

### 8.2. Շրջակա միջավայրի բնութագրերը

### 8.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.

ՀՀ Լոռու մարզը տարածքի մեծությամբ երրորդն է հանրապետությունում (զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7 %-ը): Գտնվում է հանրապետության հյուսիսում, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (110կմ երկարությամբ), արեւմուտքից Շիրակի, արեւելքից Տավուշի, հարավից Կոտայքի եւ Արագածոտնի մարզերին: Սահմանամերձ բնակավայրերն են Արծնի, Ապավեն, Ջրամուտ, Պաղաղբյուր, Ջիլիզա: Մարզի տարածքով են անցնում Թբիլիսի-Երեւան երկաթուղու մի հատվածը:
Լոռու մարզում 2016-2017թթ.ին համայնքների խոշորացման արդյունքում Լոռու մարզը իր մեջ ընգդրկում է 56 համայնք: Բնակավայրերի թիվն է 130, որից 8 քաղաքային բնակավայր, 122 գյուղական բնակավայր: Մարզի 5000-ից ավել բնակչություն ունեցող համայնքների թիվը 12-ն է (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Սպիտակ, Տաշիր, Ախթալա, Գուգարք, Սարչապետ, Մեծավան, Գյուլագարակ, Լոռի Բերդ, և Օձուն համայնքները):
Լոռու մարզում ծովի մակերեւույթից բարձրագույն կետը Աչքասար լեռան գագաթն է (3196մ), ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 380մ):
Լոռու մարզն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանը ամբողջությամբ եւ ունի լեռնային ռելիեֆ: Նրա տարածքում են ձգվում Ջավախքի, Բազումի, Փամբակի, Գուգարաց, Վիրահայոց, Հալաբի լեռնաշղթաները: Առանձնանում են Փամբակի, Լոռվա գոգավորությունները եւ Լոռվա ձորը: Մարզն աչքի է ընկնում համեմատաբար խոնավ կլիմայով: Միջին եւ բարձրադիր գոտում կլիման բարեխառն լեռնային է, տեւական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են,

համեմատաբար խոնավ: Տարեկան թափվում են 600-700մմ մթնոլորտային տեղումներ: Նախալեռնային գոտում կլիման մերձարեւադարձային է, չափավոր շոգ եւ չորային ամառներով, մեղմ ձմեռներով: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Մարզի տարածքով է հոսում Դեբեդ գետը՝ Ձորագետ, Մարցագետ եւ Փամբակ վտակներով: Հարուստ է նաեւ հանքային աղբյուրներով: Մարզի տարածքում տիրապետում են անտառային, լեռնատափաստանային, մերձալպյան մարգագետինները:

2022 թվականին համայնքների խոշորացման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեցին համայնքների փնջեր, այդ թվում Ալավերդի խոշորացված համայնքը, որի փնջի կազմում ընդգրկված բնակավայրերն են քաղաք Ալավերդին (այդ թվում՝ Ակներ, Սանահին, Մադան գյուղական թաղամասերը), Աքորի, Կաճաճկուտ, Հաղպատ, Ծաղկաշատ, Ջիլիզա, Ախթալա, Առողջարանին կից գյուղ, Բենդիկ, Ճոճկան, Շամլուղ, Մեծ Այրում, Փոքր Այրում, Նեղոց, Շնող, Թեղուտ, Քարկոփ, Օձուն, Ամոջ, Այգեհատ, Արևածագ, Արդվի, Ծաթեր, Կարմիր Աղեկ, Հագվի, Մղարթ բնակավայրերը: Համայնքի կենտրոն է հանդիսանում Ալավերդի քաղաքը: Համայնքի կազմում ընդգրված յուրաքնաչյուր բնակավայր ունի հիմնադրման իր պատմությունը.

Այգեհատ. Գյուղը հիմնադրվել է 1719 թվականին՝ Շահվերդյաններ տոհմի կողմից, որի տարածքում եղել է հին հեթանոսական բնակատեղի իր հին աղբյուրով, որ կոչվել է Բերդաշեն:

Հին բնակատեղիում է գտնվում նաև Սուրբ կիրակի մատուռը խաչքարով, որը կառուցվել է 4-ից 6-րդ դարերում: Գյուղը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Գյուղից քիչ հեռու՝ ձորում, գտնվում է «Քոբայրի» վանական համալիրը, կարմիր խաչը, հին գերեզմանատեղիները:

Գյուղատնտեսական հողերը բոլորը օգտագործվում են: Գյուղում զբաղվում են դաշտավարությամբ, մշակում են հացահատիկային, կերային, բանջարանոցային կուլտուրաներ: Զբաղվում են նաև խոշոր եղջերավոր անասունների բուծությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Գյուղն ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց (փոստ):

Գյուղը գազաֆիկացված է, ունի շուրջօրյա ջրամատակարարում: Գյուղը ունի ֆուտբոլի դաշտ՝ դպրոցին կից, վոլեյբոլի դաշտ, ուր իրեց ազատ ժամանակն են անցկացնում գյուղի պատանիներն ու երիտասարդները:

Գյուղը գտնվում է Ալավերդի քաղաքից 14 կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից 55կմ հեռավորության վրա: Տեղակայված է Ալավերդի - Ստեփանավան ավտոմայրուղու վրա:

Գյուղը տեղադրված է Դեբետ գետի ձախ ափին, բարձրադիր սարավանդում՝ ծովի մակերևույթից 1150մ բարձրության վրա:

### 8.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն

Շրջանի երկրաբանական պայմանները: Փորվածքների ու մերկացումների տվյալներով, դիտողական ուսումնասիրությամբ և ֆոնդային նյութերով հաստատված է, որ տարածքի երկրաբանա – լիթոլոգիական կառուցվածքը պարզ է, երկրաբանական

բարդությամբ վերաբերվում է առաջին կարգի։




Շրջանի սեյսմիկ պայմանները. համաձայն ՀՀՇՆ-20.04.2020թ.-ի նորմատիվային փաստաթղթի՝ ըստ սեյսմիկ հատկության տարածաշրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax=0.3g արագացմամբ։

**8.2.3. Կլիմա և օդային** ավազան

Նախատեսվող գործունեության տարածքի կլիմայական պայմանները ներկայացված են՝ ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի։ Բերվում են Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի բնակավայրի համար բնութագրական հետևյալ կլիմայական ցուցանիշները։

Հուլիս օգոստոսի միջին ամսական ջերմաստիճանը 22,8˚C-22,9˚C է, միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 71%։ Հունվարի միջին ամսական ջերմաստիճանը՝ -1.8˚C է։ Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Ալավերդի, Օձուն և Ստեփանավանի օդերևութաբանական կայանի դիտարկումների։

- Տարեկան միջին ջերմաստիճանը 12.3°C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 37°C

- Օդի բացարձակ նվազագույն  ջերմաստիճանը -17°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 71%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա միջին ամսական 66%
- Օդի հարաբերական խոնավությունը  ամենաշոգ ամսվա միջին ամսական 71%
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 488մմ:
- Քամու միջին ամսական արագությունը հունվար ամսվա համար 2,8մ/վ է, հուլիս ամսվա համար ՝ 1,1 մ/վ:

## Օդի ջերմաստիճան, °C

| Բնակավայրի. օդեր նութա- բանական կայանի անվանումը | Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C | | | | | | | | | | | | Միջին տա րե կան. °C | Բացար- ձակ նվա զագույն. °C | Բացար ձակ առ ավե լագույն. °C |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | |
| Ալավերդի | 1.8 | 3.2 | 6.2 | 11.7 | 16.4 | 19.3 | 22.8 | 22.9 | 18.9 | 12.7 | 7.8 | 3.6 | 12.3 | -17 | 37 |

## Օդի հարաբերական խոնավությունը (%)

| Բնակավայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը, % | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | | Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 1. Օձուն | 66 | 68 | 70 | 71 | 76 | 75 | 71 | 72 | 73 | 75 | 72 | 68 | 71 | 66 | 60 | 71 | 55 |

### Մթնոլորտային տեղումները

| Բնակավայրի, | Տեղումների միջին ամսական , |
|---|---|

| օդերևութա-բանական կայանի անվանումը | քանակը | | | | | | | | | | | մմ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օրական առավելագույն | | | | | | | | | | | | |
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Տարեկան |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | |
| Ալավերդի | 19 | 20 | 32 | 50 | 89 | 83 | 46 | 35 | 36 | 37 | 25 | 16 | 488 |
| | 33 | 35 | 27 | 30 | 41 | 46 | 52 | 61 | 32 | 40 | 33 | 36 | 61 |

| Բնակավայրի անվանումը | Ամիսներ | Կրկնելիությունը, % / Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների | | | | | | | | Անդորրի կրկնելիությունը, % | Միջին ամսական արագությունը, մ/վ | Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին | Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ | Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին | Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հյուսիսային | Հյուսիս-արևելյան | Արևելյան | Հարավ- արևելյան | Հարավային | Հարավ-արևմտյան | Արևմտյան | Հյուսիս-արևմտյան | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 32.Ստեփանավան | հունվար | 2 | 3 | 8 | 7 | 7 | 37 | 30 | 6 | 49 | 2.8 | ՀվԱրմ | 1.6 | ՀվԱրմ | 3.9 |
| | | 2.0 | 1.3 | 1.5 | 2.0 | 3.0 | 3.9 | 2.8 | 2.2 | | | | | | |
| | ապրիլ | 2 | 3 | 11 | 10 | 6 | 25 | 34 | 9 | 45 | 2.0 | | | | |
| | | 2.2 | 1.4 | 1.6 | 1.9 | 2.2 | 3.1 | 2.6 | 2.2 | | | | | | |
| | հուլիս | 2 | 3 | 13 | 10 | 4 | 19 | 39 | 10 | 61 | 1.1 | | | | |
| | | 1.5 | 1.1 | 1.4 | 1.4 | 1.4 | 1.6 | 1.8 | 1.5 | | | | | | |
| | հոկտեմբեր | 2 | 3 | 12 | 10 | 5 | 24 | 37 | 7 | 59 | 1.3 | | | | |
| | | 1.7 | 1.3 | 1.4 | 1.4 | 1.6 | 2.2 | 2.2 | 2.0 | | | | | | |

**Օդային ավազան**. Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ հանրապետության տարածքի 45 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում:

Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանում, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետում, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: Անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ պարունակող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է սահմանային թույլատրելի

կոնցենտրացիաների կիրառմամբ համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Օդի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը բերված է ըստ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում տեղադրված «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից, ինչը հրապարակված է (http://meteomonitoring.am/page/1591), ըստ որի օդի որակը բնութագրող որոշ պարամետրերի վերաբերյալ տեղեկատվությունը բերված է հետևյալ աղյուսակում 263 հոգի բնակչություն ունեցող Այգեհատ բնակավայրի համար:

| Բնակչության քանակը (հազար մարդ) | Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ3) | | | |
|---|---|---|---|---|
| | Փոշի | Ծծմբի երկօքսիդ (SO2) | Ազոտի երկօքսիդ (NO2) | Ածխածնի օքսիդ (CO) |
| <10 | 0.071 | 0.006 | 0.023 | 0.8 |

**Տարածքի նկարագրություն**

**Լոռու մարզ**, մարզի կարգավիճակ ունեցող վարչատարածքային միավոր Հայաստանի հյուսիսում: Զբաղեցնում է պատմական Հայաստանի Գուգարաց նահանգի արևելյան հատվածն ու Այրարատ նահանգի Նիգ գավառի հյուսիսային տիրույթները:

Լոռու մարզն ունի ցայտուն արտահայտված բնական սահմաններ: Այն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանն ամբողջությամբ և հիմնականում ունի լեռնային ռելիեֆ՝ բարձրադիր լեռներ, անդնդախոր, երբեմն սուր կտրվածքով կիրճեր: Նրա տարածքում են ձգվում Ջավախքի, Բազումի, Փամբակի, Գուգարաց, Վիրահայոց և Հալաբի լեռնաշղթաները: Առանձնանում են Լոռու,Փամբակի գոգավորությունները և Լոռվա ձորը: Բնակավայրերը գտնվում են ծովի մակերևույթից 520-ից մինչև 1800 մետր բարձրության վրա:

Մարզի վարչական կենտրոն հանդիսացող Վանաձոր քաղաքը համարվում է Հայաստանի երրորդ խոշորագույն քաղաքը՝ շուրջ 80 հազար բնակչությամբ: Մյուս խոշոր բնակավայրերն են Ալավերդին, Ստեփանավանը, Սպիտակը, Թումանյանը, Ախթալան և Տաշիրը: Ըստ 2020 թվականի տարեսկզբի տվյալների՝ մարզի բնակչությունը կազմում է 213.3 հազար մարդ, որի ճնշող մեծամասնությունը հայերն են, սակայն համեմատականորեն քիչ չեն նաև ազգային փոքրամասնությունների (ռուսական, հունական, եզդիական, ուկրաինական և այլն)

համայնքները:

Լոռին Հայաստանի արդյունաբերական մարզերից է: Այստեղ են գործում Հայաստանի տնտեսության արդյունաբերական ճյուղի անկյունաքարային նշանակություն ունեցող մի շարք օբյեկտներ: Արդյունաբերության զարգացվածության ֆոնին ավելի քիչ զարգացած է գյուղատնտեսությունը:

Լոռին աչքի է ընկնում նաև հարուստ մշակութային ժառանգությամբ և պատմական անցյալով, որի մասին վկայում են տասնյակ վանքերը, բերդերը, ամրոցներն ու հուշակոթողները: Պատմամշակութային ինքնատիպ հուշարձանների բազմազանությունը որոշակիորեն պայմանավորված է այն հանգամանքով, որ 10-12-րդ դարերում այստեղ գոյություն է ունեցել անկախ հայկական պետականություն՝ ի դեմս Լոռու կամ Տաշիր-Ձորագետի թագավորության: Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում ներառված օբյեկտներից երկուսը՝ Հաղպատի ու Սանահինի միջնադարյան վանական համալիրները գտնվում են Լոռու մարզում:

**8.2.4. Հողային ռեսուրսներ.**

2023 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռու մարզում (ֆոնային տարածքներ և Մաղանի տեղամաս): Լոռու մարզի ֆոնային տարածքներում ուսումնասիրած հողերում քրոմի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.7-25.0 անգամ, վանադիումի պարունակությունը՝ 1.1-2.0 անգամ, նիկելի պարունակությունը՝ 6.0-24.5 անգամ, պղնձի պարունակությունը՝ 58.7-102.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 2.5-13 .6 անգամ, արսենի պարունակությունը՝ 3.0-36.5 անգամ և մանգանի պարունակությունը՝ 1.1-2.5 անգամ: Կապարի և ծարիրի պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Մաղան տեղամասի ընդերքօգտագործման թափոնները ձևավորվել են Ալավերդու պղնձի հանքավայրի ավելի քան 250 տարվա երկրաբանական ուսումնասիրության և շահագործման արդյունքում և ներկայացված են ստորգետնյա լեռնային փորվածքների անցման և հանքաքարից մետաղի կորզման արդյունքում առաջացած լցակույտերով, ինչպես նաև Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի գործունեության հետևանքով առաջացած արտադրական մկնդեղի թափոններով: Ալավերդու պղնձի հանքավայրի հումքային հենքի վրա գործել է Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատը: Ընդերքօգտագործման թափոնների տեղադիրքը - Ալավերդի քաղաքից մոտ 2.5կմ հյուսիս, Լենահանք (նախկինում՝ Մաղան, Լենռուդնիկ) գյուղից արևմուտք՝ հարակից տարածք: Տարածքում կուտակված ընդերքօգտագործման թափոնները դիտարկվում են որպես տիրազուրկ/լքված: Մաղան տեղամասում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.1-439.3 անգամ, քրոմի պարունակությունը՝ 1.6-20.5 անգամ, նիկելի պարունակությունը՝ 1.3-22.3 անգամ, պղնձի

պարունակությունը՝ 7.0-3183.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 1.1-795.9 անգամ, արսենի պարունակությունը՝ 2.5-578.0 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.1-491.7 անգամ և ծարիրի պարունակությունը՝ 1.1-199.7 անգամ: Մանգանի պարունակությունը չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:

Այգեհատ բնակավայրում հողային ռեսուրսների աղտոտվածության ուսումնասիրություն չի իրականցվել:

### 8. 2.5.Ջրային ռեսուրսներ

Հյուսիսային ՋԿՏ-ում 2025 թ-ի 3րդ եռամսյակին ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 22 դիտակետում: Փամբակ գետի ջրի որակը Սպիտակ քաղաքից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից վերև՝ հուլիսին և սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև՝ հուլիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «վատ» որակ (5-րդ դաս): Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հատվածում հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում՝ հուլիսին և օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (5-րդ դաս): Ձորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հուլիսին՝ «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3- րդ դաս): Սարատովկա գյուղից ներքև հատվածում ջրի որակը հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Մարց գետի ջրի որակը գետաբերանում հուլիսին գնահատվել է «անբավարար» (4- րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Նախատեսվող գործունեության շրջակայքում ջրային ռեսուրսներ չկան:

### 8.2.6. Կենսաբազմազանություն

Լոռու մարզը բնութագրվում է բարձր կենսաբազմազանությամբ և հանդիսանում է Հայաստանի առավել էկոլոգիապես արժեքավոր տարածաշրջաններից մեկը: Մարզի տարածքում ձևավորված են տարբեր էկոհամակարգեր՝ ներառյալ լայնատերև անտառներ, լեռնային մարգագետիններ, գետահովիտներ և ժայռոտ լանդշաֆտներ, որոնք ապահովում են բուսական և կենդանական տեսակների մեծ բազմազանություն:

**Բուսական աշխարհ**

Լոռու մարզում գերակշռում են լայնատերև անտառները, որոնց հիմնական տեսակներն են կաղնին (Quercus spp.), հաճարենին (Fagus orientalis), բոխին (Carpinus betulus) և թխկին (Acer spp.): Տարածքը հարուստ է նաև վայրի պտղատու ծառերով և դեղաբույսերով:

Գրանցված են նաև Կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակներ, որոնք պահանջում են հատուկ պահպանություն:

**Կենդանական աշխարհ**

Մարզի ֆաունան ներառում է տարբեր կաթնասուններ, թռչուններ, սողուններ և երկկենցաղներ: Կաթնասուններից հանդիպում են գորշ արջը (Ursus arctos), գայլը (Canis lupus), աղվեսը (Vulpes vulpes) և այլ տեսակներ: Տարածքը կարևոր է նաև գիշատիչ թռչունների և միգրացիոն տեսակների համար: Որոշ տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Գործունեության տարածքում ըստ գրական տվյալների, ելնելով կոորդինատներից կարող է հանդիպել՝ կենդանիների Կարմիր գրքում գրանցված ճպուռ ճահճային – Leucorrhinia pectoralis: Կարգավիճակը ծայրահեղ հազվագյուտ տեսակ է: Հանդիսանում է տեսակի արեալի սահմանագծին գտնվող ռելիկտային պոպուլյացիա: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված» EN B1a+B2a: Ընդգրկված է Բեռնի կոնվենցիայի Հավելված II-ում:

Կատարվել է դաշտային ուսումնասիրություն, առկա չեն Կարմի գրքում գրանցված բույսեր և կենդանիներ:

### 8.2.7. Պատմության և մշակութային հուշարձաններ:

Հայաստանի Լոռու մարզի տարածքը չափազանց հարուստ է պատմամշակութային կառույցներով՝ վանքային համալիրներ, բերդեր, խաչքարեր, կամուրջներ, դամբարաններ, հուշակոթողներ, հուշաղբյուրներ:

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման (հավելված 6)՝ Լոռու մարզի Այգեհատ գյուղի համար Յայաստանի Յանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը բերված է հետևյալ աղյուսակում

**5.14 ԱՅԳԵՅԱՏ գյուղ**

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | ԲԵՐԴՇԵՆ | Ք.ա. 4-3 հազ. | | Յ | 1 |
| 2 | | | ԳԵՐԵԶՄԱՆՈՑ | 7-13 դդ. | գյուղի հվ եզրին | Յ | 2 |
| | 2.1 | | եկեղեցի | 12 դ. | | Յ | 2.1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **2.2** | | Մատուռ Սբ. Կիրակի | 13 դ. | | Հ | 2.2: Ենթակայու-թյամբ ներկայաց-ված է 4 հուշարձան (2.2.1-2.2.4) |
| **3** | | | ԳՅՈՒՂԱՏԵՂԻ | միջնադար | | Հ | 3 |
| **4** | | | ԳՅՈՒՂԱՏԵՂԻ | միջնադար | | Հ | 4 |
| **5** | | | ԵԿԵՂԵՑԻ | միջնադար | | Հ | 5 |
| **6** | | | ԽԱՉՔԱՐ | 12-13 դդ. | գյուղից հվ | Հ | 7 |
| **7** | | | ԽԱՉՔԱՐ | 12-13 դդ. | գյուղից հվ | Հ | 8 |
| **8** | | | ԽԱՉՔԱՐ ԹԵՎԱՎՈՐ «ԲԵՄ» | 12 դ. | գյուղից հվ-աե | Հ | 6 |
| **9** | | | ՄԱՏՈՒՌ | 12 դ. | գյուղից աե | Հ | 9 |
| **10** | | | ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ | միջնադար | | Հ | 10 |

### 8.2.8. Բնության հուշարձաններ

Լոռու մարզը հարուստ է բնական հուշարձաններով: ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ մարզում կան 3 ջրագրական հուշարձան, 4 երկրաբանական հուշարձան, 1 բնապատմական և1 կենսաբանական հուշարձան:

### 8.2.9. Սոցիալ-տնտեսական

Այգեհատ-Գյուղը հիմնադրվել է 1719 թվականին՝ Շահվերդյաններ տոհմի կողմից, որի տարածքում եղել է հին հեթանոսական բնակատեղի իր հին աղբյուրով, որ կոչվել է Բերդաշեն: Հին բնակատեղիոմ է գտնվում նաև Սուրբ կիրակի մատուռը խաչքարով, որը կառուցվել է 4-ից 6-րդ դարերում: Գյուղը հարուստ է պատմամշակութիյին հուշարձաններով: Գյուղում 1979 թվականին կառուցվել է 1941-45թթ.Հայրենական մեծ պատերազմում զոհվածներին նվիրված հուշարձանային համալիրը, որտեղ դրված է նաև Արցախյան պատերազմում զոհվածներին նվիրված հուշաքար, եղեռնի զոհերին նվիրված հուշաքար, ինչպես նաև հարակից տարածքում է թաղված Սիմոն Զավարյանի (ՀՅԴ հիմնադիրներից) աճյունը: Գյուղից քիչ հեռու ՝ ձորում, գտնվում է «Քոբայրի» վանական համալիրը, կարմիր խաչը, հին գերեզմանատեղիները :Մեր պապերը ձորից բարձրացել են այժմյան տարածք, որի համար ճանապարհ են բացել և այն անվանել «Մուտ» և որը գտնվում է «Քարի գլուխ» կոչվող տարածքում և անցնում է մատուռի կողքով : <<Քարի գլուխ>> կոչվող տարածքը մեր տեսարժան վայրերից մեկն է , որտեղից երևում է մեր ձորը իր ամբողջ հմայքով:Այնտեղից երևում է Դեբետ գետը, Դժվար / Չաթին դաղ/ լեռը,

ինչպես նաև Քոբայրի վանքը, որոնք կարծես ափիդ մեջ լինեն: Այժմ շատ զբոսաշրջիկներ են գնում այդ տեսարժան վայրերով , մեր բնությամբ հիանալու:
1831 թվականին գյուղն ունեցել է 88, 1886թ. - 337, 1922թ. - 500, 1959թ. - 391, 1970թ. - 366, 1979թ.- 295, իսկ ներկայում գյուղում հաշվառում ունի  288 մարդ: Բնակչության 20 տոկոսը գնում է արտագնա աշխատանքի: Սեռային կազմում  գերակշռում են կանայք: Գյուղատնտեսական հողերը բոլորը օգտագործվում են: Գյուղում զբաղվում են դաշտավարությամբ , մշակում են հացահատիկային , կերային, բանջարանոցային կուլտուրաներ: Զբաղվում են նաև խոշոր եղջերավոր անասունների բուծությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Մինչև սեփականաշնորհումը և 2000-ական թվականները զբաղվում էին նաև այգեգործությամբ (ծիրան,խնձոր.տանձ, սալոր): Վերջին ժամանակները այգեգործությունը կանգ էր առել , սակայն գյուղում վերջին տարիներին ինտենսիվ այգեգործությունը   զարգացնում է գործարար՝ գյուղի թոռ, Աղասի Ջավարյանը:
Գյուղն ունի դպրոց, բուժկետ, կապի հանգույց (փոստ):
Գյուղը գազաֆիկացված է , ունի շուրջօրյա ջրամատակարարում, 2019 թվականին սուբվենցիոն ծրագրերով կառուցվել են խաղահրապարակ և ոռոգման համակարգ տնամերձերը մշակելու համար:
Գյուղը տվել է  շատ անվանի մարդիկ, քաղաքական, պետական,հասարակական գործիչներ , բժիշկներ, զինվորականներ, դասախոսներ, ճարտարապետներ  և այլն:Գյուղն ունեցել է իր պարային համույթը ազգային պարերով , որոնք առանձնացել են իրենց բնույթով; Համույթը  իր աբողջ ժամանակաշրջանում մասնակցել  է փառատոնների, մրցույթների , այլ միջոցառումների և շահել բազմաթիվ մրցանակներ ու շնորհակալագրեր, բարձր պահելով Շահվերդյանների անունն ու պատիվը:
Գյուղում է գտնվում  Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի քրոջ տունը, ինչպես նաև աշուղ-երգահան  Սայաթ - Նովայի կինը՝ Մարմարը, նույնպես Այգեհատից էր: Այն տունը ուր նրանք ապրել են,  կիսավեր , խարխուլ վիճակում է և գտնվում է այլ սեփականատիրոջ ձեռքին:
Գյուղը ունի ֆուտբոլի դաշտ՝ դպրոցին կից, վոլեյբոլի դաշտ, ուր իրեց ազատ ժամանակն են անցկացնում գյուղի պատանիներն ու երիտասարդները:
Գյուղատնտեսական արտադրանքի մշակման տնտեսության կառուցումը կնպաստի գյուղում նոր աշխատատեղերի ստեղծմանը թե շինարարության ընթացքում, թե արտադրամասը շահագործելու ընթացքում: Բացի այդ այն հնարավորություն կտա գյուղացիների արտադրանքը մշակելուն, այլևս մթերքները չեն ուղարկի հեռավոր կենտրոններ մշակման համար, որը ևս կխթանի համայնքի սոցիալ տնտեսական զարգացմանը:

## 9. Նախատեսվող գործունեության տեխնիկական տեխնոլոգիական լուծումները

**Շահագործման փուլ**

Արտադրական նշանակության շենքը ապահովված է կադաստրային փաստաթղթերով, նպատակային նշանակությունը արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

Նախատեսվող շենքն ապահովված է լինելու ջեռուցման, ջրամատակարարաման, ջրահեռացման, օդափոխության, հրդեհամարման համակարգերով: Նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12. 04.2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան: Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

1) ջեռուցման համակարգերին.
2) տաք ջրամատակարարման համակարգերին.
3) օդի լավորակման համակարգերին.
4) ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը
5) լուսավորության համակարգերին

**Ջերմամատակարարում.** Շենքի ջերմամատակարարումը նախատեսված է ջրամատակարարման համակարգով՝ տաք ջրամատակարարման և ջեռուցման միջոցով: Տաք ջրամատակարարման ներքին ցանցը կատարվելու է պողպատյա խողովակներով՝ ավազե հիմքով, անշարժ հենարաններով: Ջերմատար ջրի ջերմաստիճանը կազմելու է 60$^0$C:

**Գազամատակարարում**: Գազամատակարարման համար առկա է տեխպայման՝ հավելված 7, առ այն, որ գազաֆիկացումը հնարավոր է իրականացնել Օձուն գյուղը սնող միջին ճնշման d=219մմ վերգետնյա գազատարից: Միացման կետից մինչև գազաֆիկացվող տարածք հեռավորությունը կազմում է L=670մ, d=75մմ: Նվազագույն և առավելագույն ճնշումները միացման կետերում կազմում են 1,2-1,5կգ/սմ2:

**Հակահրդեհային անվտանգություն.** Հրդեհաանվտանգության նպատակով նախատեսվում է շենքերում տեղադրել հակահրդեհային հիդրատներով՝ ինչպես նաև օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակածխային, արտածման համակարգերով:

**Օդափոխություն**

Շենքում նախատեսված է ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր մեխանիկական դրդմամբ:

Էներգոարդյունավետության նպատակով նախատեսված են ներածման-արտածման սարքեր ռեկուպերատորով:

Համակարգերի համարները և սպասարկվող սենյակները ներկայացված են օդափոխության սարքավորումների բնութագրում:

Սանհանգույցներից կազմակերպված են արտածման համակարգեր մեխանիկական դրդմամբ:
Ներածման բոլոր օդատարները, ինչպես նաև ռեկուպերացիոն համակարգերի արտածման օդատարները մեկուսացվում են 10մմ հաստությամբ մեկուսիչներով:
Օդատարները ընդունված են ցինկապատ պողպատից:

**Ջրամիացում և Ջրահեռացում:**

Ջրամիացման և ջրահեռացման համար առկա է տեխնիկական պայման՝ տրված Վեոլիա ջուրՓԲԸ-ի կողմից, հավելված 9, ըստ որի առկա է ջրագծի միացման կետը՝ Փ=50մմ խողովակից, որը գտնվում  է տարածքից մոտ 170 մ հեռավորության վրա: Գործող խողովակի ճնշումը կազմում է 5մթն.: Ջրաչափական հանգույցի համար նախատեսվում է կառուցել դիտահոր: Ջրահեռացման համակարգը բացակայում է, ուստի կառուցվելու է հերմետիկ հոր՝ սեփականատիրոջ տարածքում:

**Կոյուղագիծ.** Կենցաղային կոյուղու ցանցը ինքնահոս է: Նկուղային հարկի սանհանգույցի համար նախատեսված է կոյուղու ճնշումային սարքավորում: Կոյուղաջրերի հեռացման համար տեղադրվելու է  Տոպաս մակնիշի մաքրման կայան, որից դուրս եկող մաքրված, բակտերիաներից զուրկ ջուրը օգտագործվելու է տարածքի ոռոգման նպատակով:

**Աղբահեռացում.** Շահագործման փուլում աղբահեռացումը կատարվում է Լոռու համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ պայմանագրային հիմունքներով: Տեղադրվելու են 4 հատ 1*1,5 չափերի աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:

**Բարեկարգում, Կանաչապատում.** Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 787.33 մ $^2$ մակերեսով: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ/գեոծածկույթով/՝ համաձայն Լոռու համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծի: Նախատեսվում է տնկել 16 թխկի, 65 հատ տուա տեսակի ծառեր:

**Էլեկտրամատակարարում.** Նախատեսվում է կառուցել ենթակայան, առկա տեխնիկական պայման: Պահանջվող հզորությունը՝ 1500կվ, լարման մակարդակը 35 ԿՎ, եռաֆազ միացում: Էլեկտրամատակարարման համար նախագիծն իրականացվելու է համաձայն էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոնների, ՀՀ կառավարության 2023թ-ի ապրիլի 21-ի N592-Ն որոշման: Սնուցումը կիրականացվի քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված գործարկման եզրակացության, «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրված լարման կարգադրության և էլ. էներգիայի մատակարարման պայմանագրի առկայության դեպքում:

**Շինարարության փուլ**

**Շինարարական հրապարակ.** շինհրապարակում նախատեսվում է հետևյալ

աշխատանքները.
• շինարարական հրապարակի կազմակերպում,
• ժամանակավոր ինժեներական ցանցերի՝ ժամանակավոր լուսավորության, ջրամատակարարման անցկացում,
• հողային աշխատանքներ՝ տարածքի հարթեցում, թափոնների հեռացում, պատուհանների ճաղաշարերի, դուռ պատուհանների, դարպասների, ներքին կոմունիկացիաների ապամոնտաժում, տեսակավորում, շին-մոնտաժային աշխատանքների իրականացում,
• շին-մոնտաժային մեխանիզմների. ամբարձիչ-տրանսպորտային միջոցների և գործիքների տեղակայում շին. հրապարակում և այլն: Շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինհրապարակն ամբողջ տարածքն է:
Շին. հրապարակում լինելու են.
• ավտոմեքենաների, մեխանիզմների կայանման, առասանման ճոպանների տեղակայման վայրեր,
• պահակատուն -1 հատ,
• փակ պահեստ՝ շինանյութի համար,
• լվացարան-ցնցուղարան,
• շինարարական նյութերի, գործիքների պահեստներ, բացօթյա պահեստ,
• աշխատողների համար ժամանակավոր շինություններ՝ զրասենյակ, հանդերձարան, սննդի ընդունման կետ՝ ճաշարան, լվացարան- ցնցուղարան, պատրաստի 1*1,5 չափերի զուգարանախցիկ/բիոզուգարան՝ լվացարանով/- 1 հատ,
• շինհրապարակում լինելու են նաև 1 հատ 7,30x3 մ չափերի ավտոմեքենաների անիվների լվացման հարթակ, ինչպես նաև հետադարձ ջրամատակարարումով պոմպ: Շինհրապարակն ապահոված է լինելու գիշերային լուսավրությամբ և լուսային ազդանշանային համակարգով:

**Շինհրապարակի կազմակերպման հատակագիծը**

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վագոն տնակներում: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին: Անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 0,84$մ^3$ չափերի պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ շին հրապարակի ջրցանման և

անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ: Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր մետաղաթիթեղով ցանկապատ: Տեղադրվելու է 3-5,0մ լայնությամբ 1 դարպաս: Դարպասի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ: Շինհրապարակն ապահովված է լինելու՝ հակահրդեհային վահանակով, կենցաղային աղբամաններով, էլեկտրականությամբ, գիշերային լուսավորությամբ՝ 2 տեսախցիկից ոչ պակաս: Շինհրապարակում նախատեսված է քանդած շինանյութի կուտակման, զտած շինանյութի տեղադրման, ինչպես նաև շինարարական աղբի կուտակման տարածքներ: Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները: Ելնելով առկա պայմաններից շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ: Շինարարական նյութերը պահեստավորվելու են շինհրապարակում: Շինհրապարակի կազմակերպման նախագիծը և ժամանակացույցը բերված են հավելված 5-ում:

**Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ.** գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- ավտոկռունկ՝ 1 հատ
- էքսկավատորը՝ 1 հատ
- ավտոինքնաթափ մեքենա՝ 1 հատ

Օգտագործվելու են նաև ամբարձիչ, տրակտոր, բետոնախառնիչ, բետոնամղիչ պոմպ, եռակցման ապարատ, ձեռքի կտրող, հատող ժամանակակից գործիքներ, ձեռքի տոփանիչ և այլն: Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5 $^{0}$ -ից ոչ ավել թեքություն: Շինտեխնիկան լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկան կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շին հրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի

հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում: Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում: Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

**Ջրամատակարարում և ջրահեռացում.** Շինարարության փուլում նախատեսվում է ժամանակավոր ջրագծի անցկացում: Շինարարության ընթացքում ջուրը բվերվելու է տարածքից 170մ հեռավորության ջրատարից: Շինարարության փուլում աշխատողների կենցաղային կարիքների հոգալու նպատակով տեղադրվելու է բիոզուգարան՝ լվացարանով: Խմելու և կենցաղային կարիքների համար ջուրը կբերվի շշալցված տեսքով:

**Հրդեհաշիջման համակարգ.** շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվելու են «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի կողմից տրված հրահանգներով: Շինարարական հրապարակում տեղադրվելու է հրդեհաշիջման 1 վահանակ՝ դարպասների մոտ, յուրաքանչյուրի վրա հակահրդեհային կրակմարիչներով՝ 4 հատ: Շինարարության փուլում տեղադրվելու է նաև 5 տոննա տարողության ջրի բաք՝ հրդեհամարման, ջրցանի նպատակով:

**Աղբահեռացում.** շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով, մանրամասն քանակները նկարագրված են 11.5 ենթաբաժնում: Շինաղբի կուտակումը կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*1 չափերի 2 աղբարկղ: Շինարարության փուլում աղբահեռացումը իրականացվելու է ըստ մասնավոր ընկերությունների հետ կնքված պայմանագրի:

Շինարարության իրականացման ժամանակացույցը

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 1020 օր: Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II հիման վրա, հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը:

## 10. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Շենքի կառուցման շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, իսկ շահագործման փուլում ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով և բնական գազ:

**10.1 Ջուր**. շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար: Աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար ջուրը կբերվի շշալցած տարբերակով: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար: Ջրցանի համար նախատեսված տեխնիկական ջուրը մատակարարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կամ անձանց կողմից, որոնք ունեն համապատասխան հավաստագրեր, որոնց հետ պայմանագիրը կկնքվի կապալառու կազմակերպությունը շինարարական աշխատանքների սկզբում:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝ WË.ï. = (n x N + n1 x N1) x T,

որտեղ n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 2 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ$^3$ օր/մարդ n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ մոտավոր 20 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է ՝ 0.025մ 3օր/մարդ T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1020 օր:

Wխ.տ.= (2 x 0.016 + 20 x 0.025) x 1020 = 542,64 մ $^3$ /շին. Ժամ:

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝ Մ1 = Տ1 x K1 x T, որտեղ՝ Տ1 – ջրվող տարածքի մակերեսը 2500 մ $^2$, (շինհրապարակ, ճանապարհներ)

K1 – 1 մ $^2$ օրական ջրցանի նորմը, 0.0015մ$^3$,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 500 (առավելագույնը 500օր, ներառված կրկնակի ջրցանը) Մ1 = 2500 x 0.0015 x 500=1875 մ $^3$/շին. ժամ. կամ 18,75 մ 3 /օր:

### 10.2 Շինանյութեր

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ
- կախովի ցեմենտի պանելներ
- ֆիբրոցեմենտ
- փայտ
- մետաղ, մետաղական կառուցվածքներ
- ամրանային ձողեր
- բարձրորակ երեսապատման սալիկներ, բետոն, պեմզաբլոկ
- ապակի

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել սենդվիչ պանելներով: Պատուհանները լինելու են ալյումինե, ջերմ. կամրջակով, երկշերտ ապակեփաթեթով: Աստիճանները՝ երեսապատվելու են բազալտե սալիկներով, հատակը մետլախային խեցեսալիկներով և վինիլներով: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով: Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից: Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում: Շինհրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

## 11.Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը

Գործունեությունն իրականացվելու է ՀՀ Լոռու մարզի Լոռու համայնքի Այգեհատ բնակավայրի վարչական տարածքում: Նախատեսվող գործունեության իրականացման

հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, որոնք կլինեն կարճաժամկետ: Շենքը կառուցվելու է ՀՀ գործող շինարարական նորմերին և պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ ՀՀՇՆ 30.01-2014թ. «Քաղքաշինություն. քաղաքային և գյուղական վայրերի հատակագծում և կառուցապատում», ՀՀՇՆ 30.01-2014թ. «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն», ՀՀՇՆ 11-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»: Գործունեության հարակից տարածքները արդեն իսկ կառուցապատված են, ուստի տարածքի հարակից շրջապատը ուրբանիզացված է:

11.1 **Օդային ավազան**.

Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման) ընթացքում, ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով: Օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմերի սահմաններում: Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ: Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

1) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.

2) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ.

3) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.

4) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս.

5) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.

6) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև

շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.

7) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ: Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում: Շահագործման փուլում օդային ավազան հնարավոր աղտոտվածություն կառաջանա կաթսայատան աշխատանքի արդյունքում, որոնք կլինեն նորմերի սահմաններում: Այն օդային ավազանի լրացուցիչ ծանրաբեռնվածություն չի ավելացնի, քանի որ իրականացվելու է ժամանակակից սարքավորումների տեղադրում, որոնք ֆիլտրում են դուրս եկող օդը, դրանով իսկ նվազեցնելով աղտոտվածությունը:

**11.2 Հողային ռեսուրսներ.**

**Հողային աշխատանքներ. Հողային աշխատանքներ.** կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ՝ հանույթ՝ 37 990 մ $^3$, տարածքի հարթեցման ընթացքում՝ 25810մ$^3$ հողային հանույթ, ետ լիցք՝ 26 920մ$^3$: Ավելացված ծավալի գռունտը՝ 36880 մ$^3$ համայնքապետարանի համաձայնությամբ տեղափոխվելու է հատկացված վայր: Հողային զանգվածն առաջանալու է հիմքերի փորման, տարածքի հարթեցման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային աշխատանքները կատարվելու են մեքենա-մեխանիզմներով և ձեռքի կտրող, հատող ժամանակակից գործիքներով: Յուրաքանչյուր 50 սմ հաստությամբ շերտով ետլիցքից հետո կատարվելու է գրունտի ջոր և թաց տոփանում:

Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿIII-4-81-ի պահանջներին համապատասխան:

**11.3 Ջրային ռեսուրսներ.**

Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ: Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- անձրևաջրերը և արտադրական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում

տեղադրվող պարզարան՝ 0,84 մ $^3$ չափերի։

- ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,
- պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինաղբ, ժամանակ առ ժամանակ կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,
- բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար։

**11.4 Աղմուկ և թրթռում**

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ։

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան։

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շինությունները, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր։

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էկսկավատորը, իսկ ավարտին գլդոնը։ Միաժամանակ այս շինտեխնիկան չի շահագործվում։ Երկու աղմուկի աղբյուրները կրում են ժամանակավոր բնույթ։ Էկսկավատորի աղմուկի մակարդակը՝ $LA_{էկվ}$, կազմում է 85 դԲ։

Գլդոնի աղմուկի մակարդակը՝ $LA_{էկվ}$, կազմում է 80 դԲ։

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ ≤ 200կգ/մ²: Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

$$I_{աղ} = 23 \lg m_{է} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^2$$

$$I_{աղ} = 13 \lg m_{է} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^2$$

Որտեղ $m_{է} = Km$ – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ$^2$,

K –գործակից է , որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը 200կգ/մ² K=1,3

$m_{է}$= 1,3 x 200=260

$$Լ_{աղ} = 13\lg m_{է} - 13 = 18{,}2 \text{ դԲ}$$

Շինհրապարակից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - Լ_{աղ} = 85 - 18{,}2 = 66{,}8 \text{ դԲ}$$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հաղիսանում են որպես պաշպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը $R_{Ստ\,ր}$ կազմում է միջնը 50 դԲ:

$LA_{տար} = 66{,}8 - 50 = 16{,}8$ դԲ

$$\text{Գլդոնի համար } LA_{տար} = LA_{էկվ} - Լ_{աղ} = 80 - 18{,}2 - 50 = 11{,}8 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությաննների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլդոնի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրակացվելու են միայն ցերեկային ժամերին: ՀՀ-ում թրթռումների մակարդակը կանոնակարգվում է համաձայն «Աշխատատեղերում, բնակելի եվ հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը» ՀՆ N 2.2.4-009-06 հաստատելու մասին 533-Ն հրամանի, ըստ որի իրականացվող աշխատանքների ընթացքում աշխատատեղերում և մոտակա բնակելի տարածքում առաջացող թրթռման մակարդակները դասակարգվում է հետևյալ կերպ՝

3.2.1 ընդհանուր թրթռում 1-ին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որն առաջանում է աշխատատեղերում (արտադրական սենքում և արտադրական սենքից դուրս) տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաներից, տրանսպորտային միջոցներից,
3.2.2 ընդհանուր թրթռում (վիբրացիա) 2-րդ կարգի - տրանսպորտատեխնոլոգիական թրթռում (վիբրացիա), որն առաջանում է աշխատատեղում՝ արտադրական սենքում հատուկ նշանակության ուղեգծերով կամ հարթակներով տեղաշարժվող մեքենաներից և մեխանիզմներից,
3.2.3 ընդհանուր թրթռում (վիբրացիա) 3-րդ կարգի - տեխնոլոգիական թրթռում (վիբրացիա), որն առաջանում է աշխատատեղերում ստացիոնար մեքենաներից կամ կարող է փոխանցվել թրթռման աղբյուր չունեցող աշխատատեղ:

**Աշխատատեղերում թրթռման (վիբրացիայի) սահմանային թույլատրելի մակարդակները** որոշվում են նշված օրենքի 5րդ կետում նշված 1-5 աղյուսակների արժեքներին համապատասխան:

**Աշխատանքների ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակները չեն գերազանցի թույլատրելի նորմերը, ինչպես նաև** նախատեսվող գործունեության տարածքին մոտ չկան բնակելի և հասարակական շենք-շինություններ, ինչպես նաև այլ օբյեկտներ, որոնք կարող են ենթարկվել ազդեցության:

**11.5 Թափոններ.**

Շինությունների քանդման աշխատանքներ չեն նախատեսվում: Թափոնների հնարավոր առաջացումը պայմանավորված է շինարարական գործընթացում օգտագործվող փայտանյութի և փաթեթավորման նյութերի մնացորդներով:

Շինարարության ընթացքում առաջանալու են հետևյալ տեսակի թափոնները: Ներկայացված են ստորև դրանց դասակարգումները ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ-ի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանով հաստատված ցանկի անվանումներին:

- շինարարության փայտանյութի թափոններ՝ այդ թվում շինությունների քանդելուց և մասնատելուց առաջացած ՝ 100 կգ (17120500 01 00 4) 4րդ դաս,
- յուղոտված լաթեր (58200600 01 01 4) 1 կգ
- մալուխների, հաղորդալարերի մնացորդներ՝ կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ(ծածկագիր՝ 35131200 01 995), 5-րդ դաս, 3կգ, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 3531030501013)՝3րդ դաս, 2կգ
- Փորման աշխատանքների արդյունքում առաջացած վտանգավոր նյութերով

չաղտոտված հող՝ 3140110008995 ծածկագրով:

**Կենցաղային աղբի հաշվարկները**

Կենցաղային աղբի հաշվարկները (Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/ բացառությամբ խոշոր եզրաչափերի - ծածկագիրն է 91200400 01 00 4):

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային աղբը կհաշվարկվի հետևյալ կերպ՝ M=n*m m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ n – աշխատողների թիվն է M=22*120= 2640 կգ/տ կամ 7.23կգ/օր: Շինարարությունը տևելու է 1020 օր, հետևաբար 1020*7,23= 7,377.53 կգ :

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,
- շին հրապարակի տարածքում կհստակեցվի շին աղբի նախնական կուտակման վայրը,
-շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,
- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ 1,5x1մ $^3$ չափերի պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ,
- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
-բացառել աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից: Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 4 հատ 1,5x1մ $^3$ տարողության պլաստմասե աղբամաններ:

Արտադրությունում աշխատելու է առավելագույնը 30 մարդ: Համաձայն գործող քաղաքաշինական և սանիտարահիգիենիկ նորմերի՝արտադրական

կազմակերպությունների աշխատակիցների համար կենցաղային թափոնների կուտակման նորման կազմում է 0.12 մ³/տարի (1 աշխատակցի հաշվով):

**Տարեկան քանակը:** 30 մարդ * 130 կգ = 3900 կգ/տարի: **Բաղադրությունը՝** Սննդի մնացորդներ, անձնական հիգիենայի պարագաներ, գրասենյակային թղթեր: Հաշվի առնելով բարձր արտադրողականությունը (6000 կգ/ժ)՝ հումքի ընդունման և պատրաստի արտադրանքի տեղափոխման փուլերում կառաջանան հետևյալ թափոնները (քանակները հիմնված են միջին վիճակագրական տվյալների վրա:

Թուղթ և ստվարաթուղթ ~ 1.5 - 2.0 տոննա/տարի:

Պլաստիկ թափոններ ~ 1.0 - 1.5 տոննա/տարի

Ապակե տարաներ (եթե կիրառվում է) ~ 0.2 տոննա/տարի (կամ ըստ փաստացիի)

Փայտյա թափոններ (Վնասված տակդիրներ) ~ 0.5 տոննա/տարի

**Կենցաղային աղբը պ**արբերաբար տեղափոխվելու է մոտակա աղբավայր՝ համայնքի սպասարկող աղբահանության ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն: **Ստվարաթուղթ, պլաստիկ, ապակին չ**են թափվելու աղբավայր: Դրանք կուտակվելու են և պայմանագրային հիմունքներով հանձնվելու են վերամշակող կազմակերպություններին (ՀՀ-ում գործող թղթի և պլաստիկի վերամշակման ընկերություններին): Առաջանալու են նաև բնական ծագում ունեցող օրգանական թափոններ՝ ընկույզի կճեպ, խոտան, 11130000 00 00 0 ծածկագրով մրգերի և բանջարեղենների մշակման թափոն: Ըստ արտադրողականության ծավալների՝ առավելագույնը 6000 կգ/ժամ, տարեկան մոտ 200 աշխատանքային օրվա կտրվածքով կստացվի հետևյալը՝

Օրական հումքի մշակում. 6տոննա/ժամ *8 ժամ = 48 տոննա/օր արտադրություն, տարեկան կտրվածքով 200 օր*48 տոննա = 9600 տոննա, որից ընկույզի կեղև կկազմի մոտ հումքի ընդհանուր զանգվածի 45%, հետևաբար 45*9600տոննա/100=4320 տոննա/տարի ընկույզի խոտան:

## 11.6 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում կապված՝

• հրդեհների առաջացման, բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),

• աշխատանքի ընթացքում հնարավոր վթարային իրավիճակների առաջացման,

• հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի հետ:

Համաձայն երկրաբանական ուսումնասիրության արդյունքների՝ վտանգավոր երևույթներն ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են: Կատարվել են գործիքային ստուգումներ՝ շերտերում առաձգական ալիքների տարածման արագությունների որոշման համար: Արատակարգ իրավիճակների

հնարավոր ազդեցությունները կանխարգելու համար կառուցապատումը պետք է կատարել, ելնելով Արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի գնահատման ապահովման նպատակով, քաղաքաշինական բնագավառում առկա օրենսդրական գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների՝ համապատասխան պարտադիր պահանջներից: Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունները մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,
- կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն,
- շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,
- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,
- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ կմաքրվեն հրդեհավտանգ և պայթունավտանգ թափոններից և աղբից,
- հակահրդեհային միջտարածությունները չեն օգտագործվելու նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- բաց են լինելու նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,
- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,
- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:

**Շահագործման փուլ.** Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում

նախատեսվում է.

- շենքն ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով՝ յուրաքանչյուր հարկում 12 հատ, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակածխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով,
- տեղադրվելու 2 հատ 10մ $^3$ տարողության ջրի բաքեր՝ հրդեհամարման նպատակով,
- պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար,
- աստիճանավանդակը, դռները լինելու են հակահրդեհային:

**11. 7 Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.**

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված.

• ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ քաղաքաշինական, առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման,
• թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
• օգտագործվող հեղուկ նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման,
• արտակարգ իրավիճակների առաջացման, շինտեխնիկայի շահագործման,
• ոչ բավարար աշխատանքային պայմանների, շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ: Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆևԿ-3-4-80* նորմերի: Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնաները կցանկապատվեն,
- պահպանել ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003
- սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,
- ապահովվել աշխատողների անվտանգությունը՝ բարձրության վրա,
- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,
- բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,
- ստուգվելու են առաջանիչ բանվորների գիտելիքները, տեղադրել առաջանման

եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ,
- աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,
- ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),
- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,
- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնեության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,
- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,
- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,
- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,
- տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,
- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս,
- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, հոսանքատար մասերի մեկուսացում, - վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար,
- հատվող փողոցներում նախապես տեղադրել խողովակապատյաններ և անմիջապես կատարել հողի հետլիցք, իսկ այն հատվածները որտեղ հատվում են ուղղահայաց փողոցների հետ՝ անցորդների համար կառուցել ժամանակավոր կամրջակներ,

-ձյան, անձրևի, ուժեղ քամու, կայծակի դեպքում խստիվ արգելվում է շինմոնտաժային աշխատանքների կատարումը,

- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ:

**11.8 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.**

Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում բնակավայրի վարչական տարածքում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների հետ: Առկա է հնագիտական եզրակացություն, (հավելված 13) ըստ որի տարածքում որևէ հնագիտական հուշարձան կամ գտածոներ չեն հայտնաբերվել: Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին ԿԳՄՍՆ՝ համաձայն ՀՀ գործող  օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

**11.9 Սոցիալական.**

Շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Շինարարության փուլում առավելագույն հերթափոխում աշխատելու է միջին հաշվարկով 22 մարդ, որից՝ 20 բանվոր, 2-ը ճարտարապետա-տեխնիկական անձնակազմ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով: Շինարարության ընթացքում առաջանալու են հարակից տարածքի բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգի խախտում չի նախատեսվում: Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,
- բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,

**11.10 Լանդշաֆտ.**

Նախատեսվող գործունեության իրականցման տարածքներում (ազդեցության գոտում) լանշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն, կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում: Նախատեսվող շենքը ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն է: Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,
- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը:

**11.11 Բարեկարգում և Կանաչապատում.**

Կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում: Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 787.33 ² մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ(հավելված 10)՝ ներբակային գոտում, հարակից տարածքներում և ճանապարհի եզրերին: Կանաչապատման աշխատանքները կատարվելու են ծառատնկման՝ 65 տույա, 16 թխկի և սիզամարգերի միջոցով՝ համաձայն Լոռու համայնքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի:

Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում:
- կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով,
- նորատունկ բուսականության, ծառերի չկպչելու դեպքում նոր ծառատեսակներով փոխարինում: Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, 1մ² ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր, հետևաբար. W = (M x 0,4) x m Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի, m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական

առանձնահատկությունից, հետևաբար, W = 2146,3*0,4*25= 214630 լ/ջուր կամ 21,463 մ $^3$ /տարի ջուր (տարվա կտրվածքով)։ Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է գործունեության տարածքում գոյություն ունեցող ոռոգման համակարգից ։

**12. Մոնիթորինգ**

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է։ Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ։ Այդ նպատակով նախատեսվում է.

• համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,

• բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,

• բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկում,

• տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատած անհամապատասխանությունները,

• խստիվ պահպանել շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը,

• հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերի մապատասխանության ապահովվում,

• թափոնների տեղափոխման կազմակերպում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա,

• կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացում,

• ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար և դիտողական ստուգում,

• շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով,

• շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,

• արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում,

• շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում,

• բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում, ապահովելով կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին,

• կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կպչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովվելու նպատակով: Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում: Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում են տարեկան մոտ 400,0 հազար դրամ, ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարարական կազմակերպության կողմից:

## 13. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան

| | Մեղմացնող միջոցառումներ | | |
|---|---|---|---|
| Ծրագրի գործողություններ | Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ | Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ | Պատասխանատու մարմին |
| | ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ | | |
| 1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և դրական եզրակացության ձեռքբերում | Գործունեությունը կարող է ունենալ բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա և ըստ ՀՀ ՇՄԱԳ օրենքի պահանջում է բնապահպանական պետական փորձաքննություն: | 1.1. Մշակվել և ՇՄՆ է ներկայացվելու հաշվետվությունը՝ բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու և փորձագիտական եզրակացություն ձեռք բերելու նպատակով: | Կապալառու, պատվիրատու կազմակերպություն |

| | | | |
|---|---|---|---|
| 2. Հասարակական լսումներ, հանրության իրազեկում | Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են Ծրագրի ժամկետների ձգձգման պատճառ դառնալ: | 2.1. Նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ հանրային քննարկումն իրականացվել է Այգեհատ վարչական բնակավայրի ղեկավարի նստավայրում: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Առավոտ» օրաթերթում | Կապալառու, պատվիրատու կազմակերպություն |
| 3. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում | ԲԿՊ-ի պահանջները անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ շինարարության և շահագործման փուլերում: | 3.1. Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում: | Կապալառու, պատվիրատու կազմակերպություն |
| ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ (ՔԱՆԴՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ) | | | |
| | 1.Առողջության և աշխատանքային անվտանգության պլան | | |
| 4. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները | Ծրագրի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: Շինհրապարակին կից և շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած հիվանդությունը, վնասվածքը կամ մահը վտանգավոր նյութերի, շին առարկաների ոչ ճիշտ դասավորման և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպման պատճառով անընդունելի է և կպահանջի համապատասխան պատժամիջոցների կիրառում: | 4.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:<br>4.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, պաստառներ այլ:<br>4.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը, մասնավորապես չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում:<br>4.4. Անհրաժեշտ է *ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը* շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:<br>4.5. Անհրաժեշտ է փակցնել *հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ* և այլն:<br>4.6. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:<br>4.7. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ սարքավորումով, ինչպես նաև անհրաժեշտ է նախատեսել լծակներ դրանց կիրառումն ապահովելու համար:<br>4.8. Բարձրության (1.5 մ և ավելի) վրա աշխատանքներում իրականացնել անվտանգության միջոցառումներ, մասնավորապես անվտանգության ձողեր, տեսանելիության ժապավեններ, նշաններ և այլ միջոցառումներ, ինչպես նաև բանվորներին տրամադրել անվտանգության գոտիներ:<br>4.9. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և հաշվետվության ձևով ներկայացնել պատվիրատուին:<br>4.10. Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Հրահանգավորումը պատշաճ պետք է գրանցել գրանցամատյանում:<br>4.11. Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը: | Կապալառու |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| | 2. Հանրության հետ կապերի և իրազեկման պլան | | |
| 5 Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ | Ազդեցության ենթակա կողմերի և համայնքների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում կարող են տեղի ունենալ Ծրագրի ժամկետների հետաձգումներ: | 5.1 Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախատեսվում է իրականացնել հանդիպում ազդակակիր անձանց հետ և տեղեկացնել ԲԱՄ-ի մասին:<br>Հանդիպման ընթացքում կներկայացվի և կներդրվի ԲԱՄ-ը՝ համաձայն որի.<br>Բ: Անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ/ ցուցապաստառներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության գրասենյակի գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց, ինչպես նաև հեռախոսահամարների մասին, էլեկտրոնային հասցեներ: | Կապալառու<br><br>Կապալառու |
| Շրջակա միջավայրի պահպանության պլան | | | |
| 6 Հողային աշխատանքներ:<br><br>Շինանյութերի փոխադրումներ:<br><br>Այլ շինարարական աշխատանքներ: | Հողային աշխատանքների ընթացքում, տրանսպորտային միջոցների երթևեկության, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործման ընթացքում:<br><br>Շինարարական աշխատանքների ընթացքում գնահատվում է աղմուկի և թրթռումների մակարդակի աճ: | ***6.1Օդի աղտոտման և փոշու կառավարում***<br><br>1) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.<br><br>2) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ.<br><br>3) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.<br><br>4) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս.<br><br>5) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.<br><br>6) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.<br><br>7) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:<br>**6.2** ***Աղմուկի և թրթռումների կառավարում***<br><br>6.2.1Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:<br>6.2.2 Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը: | Կապալառու, |

| | | | |
|---|---|---|---|
| | | 6.2.3Հաշվի առնելով տարածքին կից բնակելի տների առակայությունը, աղմուկ առաջացնող աշխատանքներն անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին՝ 9:00-18:00:<br>6.2.4 Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով, որոնց սարքին լինելը ստուգվելու է յուրաքանչյուր օր աշխատանքները սկսելուց առաջ:<br>6.2.5 Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը: իսկ մեքենաների կամ խլացուցիչների անսարքինության դեպքում տվյալ մեքենան անհրաժեշտ է դուրս բերել շինհրապարակից:<br>6.2.6Անհրաժեշտ է խուսափել թրթռումներ առաջացնող աշխատանքներ կատարելուց, նման աշխատանքների անհրաժեշտության դեպքում խստորեն իրականացնել ցերեկային ժամերին և հետևել ՀՀ թույլատրելի նորմերի մակարդակներում:<br>6.2.7 Անհաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան ԱՊՄ-րով, այդ թվում՝ ականջակալներով | |
| | 4. Ենթակառուցվածքների և այլ ազդակակիր օբյեկտների կառավարման պլան | | |
| 7. Ենթակառուցվածքների և այլ ազդակիր օբյեկտների վրա ազդեցություն: | Արտադրամասի տարածք | 7.1Անհրաժեշտ է իրականացնել տարածքում առկա ենթակառուցվածքների շինարարական գործողությունները՝ ըստ նախագծի:<br>7.2 Նախատեսվող տարածքում հողային աշխատանքների ընթացքում չնախատեսված ենթակառուցվածքների ի հայտ գալու դեպքում, անհրաժեշտ է անհապաղ տեղեկացնել պատվիրատուին: | Կապալառու |
| | **5.** Շինարարական հրապարակի կազմակերպման պլան | | |
| 8.Շին հրապարակի կազմակերպում: | Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ, ազդակիր կառույցների և սպասարկվող անձնակազմի վրա: | 8.1 Շին հրապարակը անհրաժեշտ է կազմակերպել բացառապես նախագծվող տարածքի ներսում՝ բացառելով այլ ազակակիր տարածքների օգտագործումը առանց համապատասխան թույլտվության:<br>8.2Անհրաժեշտ է շին-հրապարակը կազմակերպել այնպես, որպեսզի ապահովվի կից բնակելի տների անխափան մոտեցումը:<br>8.3Անհրաժեշտ է կազմել շին հրապարակի կազմակերպման սխեման, որում նշված կլինեն շարժական տնակի տեղադրման, շին նյութերի պահեստավորման, բուսահողի ժամանակավոր պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:<br>8.4 Անհրաժեշտ է իրականացնել ժամանակավոր անթափանցելի ցանկապատում ողջ շին-հրապարակի պարագծով:<br>8.5 Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:<br>8.6 Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց հորերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում և բացառել անիմաստ բաց հորերի առկայությունը շինհրապարակում:<br>8.7 Անհրաժեշտ է ձեռնարկել բաց հորերի տեսանելի կերպով ցանկապատում/նիշահարում և նախազգուշացնող նշանների պարտադիր տեղադրում:<br>8.8 Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և կարգավորված, Իրականացնել շինհրապարակի և մոտեցնող ճանապարհների ամենօրյա մաքրում՝ ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով: | Կապալառու |
| **6.** | **7.** Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան | | |
| 9.Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ | Շինհրապարակին մոտեցման ճանապարհների վիճակը գնահատվում է բավարար երթևեկության կազմակերպման համար: | 9.1Մեքենաների և բեռնատարների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով:<br>9.2Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը և մոտեցումը անհրաժեշտ է կազմակերպել բացառապես շին հրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով:<br>9.3 Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել մոտեցման ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝<br>ապահովելով ճանապարհի նախնական վիճակը: | Կապալառու |

| | | | |
|---|---|---|---|
